

ԱՐԱՐՈՒՄԸՆԱԿ

# ԾԻՄԾԱՆ

Բարձրագույն — Ազգեականը — 1947



# ԱՐԱԿԵՍՈ ՍԵՆԱԼ

891.99

Ա. 40

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ Հ 1961 թ.

## ԾԻԱԾԱՆ

Հ 5996



ԲԱՐՁՐ

ԱԿԱՐՆԵՆԴՐ

1948



## Գ Ա Զ Ե Լ

Երդ իմ, առվիր կարկաշ եղի՛ր,  
Գարնան կարմիր կակաշ եղի՛ր:

Մղձավանջի, խավարի դեմ —  
Էռւէսի շոայլ ճաճանշ եղի՛ր:

Որպես սվին մի կայծակնող  
Շողա՛ ու միշտ առա՛շ եղի՛ր:

Խրամատներում՝ կովի ժամին ։  
Ամպրոպի դոռ շառաշ եղի՛ր:

Նոճու նման ձիդ ու խշուն  
Տարին բոլոր կանաշ եղի՛ր:

## Գ Ա Զ Ե Լ

Քեզ մարտի դաշտ ևս ճամբեցի, սիրոս վառած քո  
Ճամբեքին,  
Մնաս բարով ասիր դու ինձ մեր Գյող - դյոլի մով  
Եղերքին:

Քեզ մարտի դաշտ ևս ճամբեցի, սիրոս վառած քո  
Ճամբեքին,  
Որ գեղ անի քո արնածոր վարդի նման բացված  
Վերքին:

Քեզ մարտի դաշտ ևս ճամբեցի, սիրոս վառած քո  
Ճամբեքին,  
Որ սուր լինի, որ հուր լինի հայոց թուրք քո կուռ  
Ճեռքին:

Քեզ մարտի դաշտ ևս ճամբեցի, սիրոս վառած քո  
Ճամբեքին,  
Որ ահի մեջ, սև մահի մեջ անկոր ուժ տա նա քո  
Պենքին:

Քեզ մարտի դաշտ ևս ճամբեցի, սիրոս վառած քո  
Ճամբեքին,  
Որ մեղ հույս տա, երգ ու հույզ տա, պայծառ լույս  
տա տիեզերքին:

## ԱՅՆ ԻՄ ՍԻՐՏՆ Է

Նմանություն

Այն իմ սիրտն է, իմ կարոտն է կանաչում  
Բարդիների բողբոջներում մեր բակի,  
Այն իմ սիրտն է այնքան զվարթ կարկաչում  
Նման լեռան փեշից իջնող առվակի:

Այն իմ սիրտն է արտուտների դիլ կանշով  
Մեր աշխարհին գարնան գալուստն ավետում.  
Այն իմ սիրտն է երդի անուշ կարկաչով —  
Հովի նման մեր գաշտերում վետվետում:

Այն իմ սիրտն է, որ ձմեռվա ձյունի տակ  
Կյանք է տվել աշնան ցանած արտերին.  
Այն իմ սիրտն է, որ հույզերով անապակ  
Վեր է պարզվել գարնան պայծառ արևին:

Այն իմ սիրտն է ծիծառի պես սրաթե  
Շյուղը կտցին իր հին բունք նորոգում,  
Այն իմ սիրտն է գարծած անհոգ մի թիթեռ  
Ծաղիկներից ոսկեփոշի հավաքում:

## ՆՈՐԻՑ ԵՐԱԶ ԴՈՒ ՄՆԱՑԻՐ

Կարկաշելով ջուրն է վաղոսմ,  
Ուր է գնոսմ գլոր-գլոր,  
Այսօր տեսա քեզ երաղոսմ —  
Մենակ, տրտում, մտամոլոր...

Օրորվելով, նազուն ու հեզ  
Անցնոսմ էիր մեր տան մոտով,  
Մայրս եկավ ու գրկեց քեզ  
Մեղմեց կրծքին ջերմ կարոտով...

Ուրախ-ուրախ տուն գնացիր  
Շորորալով ծաղկաշորոսմ,  
Նորից երազ դու մնացիր  
Կարոտավառ իմ հուշերում...

1944 թ.  
ԴԱՐՆԻՑԱ.

## ԿԱԿԱԶԸ

Ես մի կակաշ տեսա ժպտուն  
Ուզունք-ուզունք ցողը վրան.  
Նա թողեց իր երգը տրտում —  
Ու բուրմունքը սրտիս վրա:

Կարմիր գլխով, կանաչ ոտով,  
Դրոշի պես արնանման,  
Սիրտս լցրեց անմահ հոտով  
Ա՛խ, կակաշը այդ աննման:

— Ասա՛, կակաշ, ո՞վ քեզ բերեց  
Ու ցանեց այս կանաչ դաշտում,  
Ո՞ր սիրահար սիրտը գերեց  
Ու տեղ տվեց քեզ իր սրտում:

Աշքեր ունես դու երկնամով  
Ժպտուն հայացք մի գրավիլ.  
Բուրում ես դու հոտով, համով  
Խոտերի մեջ գարնան թավիշ:

Պատմիր, ո՞վ ես, ուրկից եկար,  
Ես պատրաստ եմ սիրով լսել,  
Արյունով են կարծես ներկած —  
Թերթիկներդ, միջուկդ սե:

— Զինվոր էի ես էլ մի օր,  
Խոսեց կակաշը լեզու առած,  
Ու ինձ գարնան հովի թևով —  
Քոց մարտերի դաշտը տարավ:

Պատմեց, — դաժան, գոռ մարտերով  
Գիծ թերեքն ու Կուբանն անցա,  
Ռւկափինայի լայն դաշտերով,  
Անտառներով՝ խշուն, անծայր:

Գուղն իմ մնաց հազար սարի,  
Հազար ձորի, քարի ետե,  
Լրանում է երեք տարին,  
Որ մեր գյուղից դուրս եմ եկել:

Թռղել եմ ես ջանդուն վարար,  
Մեր գյուղը՝ խոր ձորերի մեջ,  
Ուր նախրյան մշտադաշար  
Բարդիներն են շրջում անվերջ:

Անցա կովով, հրով, սրով,  
Հրդեհներում կամքս կուած.  
Իմ հայրենի ժայռերը խոլ  
Սաղավարտ ու վաճան դարձրած:

Մարտերի մեջ այդ դժնդակ,  
Մարտերի մեջ՝ գոռ, արյունոտ,  
Կպավ սրտիս մի թեժ դնդակ  
Ու ես ընկա այս քարի մոտ:

Ծնկա, տեղն իմ արյուն կապեց,  
Իմ արյունից կարմրակարկաշ  
Հանկարծ խոցված սիրտս բացվեց  
Ու ես գարձա կարմիր կակաչ:

1942 թ.

Դրիմի ուղմանակատ

## Ա Յ Գ Ի

Եմ սրափի մեջ գարուն է, կյանքն է զվարթ ծիծաղում,  
Սրբում է պիրկն առած ինձ մի կանաչ կառուսել,  
Զահեն՝ կանաչ ծառերը ծափ են տալիս ու խաղում,  
Աւր գանդուրներն իրենց պերճ ծաղիկներով են հյուսել:

Կողմերում այս, ուր հնում շեն կանաչել թուփ ու ծառ,  
Ու սառ ջուր է երազել հողը պապակ ջուրթերով.  
Հողի սիրտն է ներարկել մարդը հույզերն իր պայծառ,  
Եվ զուգվել է այս ալղին դարնան նախշում զուքսերով:

Եվ հրձվել են սրտերը նրա մատադ բողբոջով,  
Թեկուղ կյանքն այդ բողբոջի կարճ է եղել աշխարհում.  
Եվ հոսել են օրերը ջրի անուշ խոխոջով,  
Եվ ստեպն այս դառել է դեղափթիթ մի գարուն:

Ամեն դարնան դարթոնքին մարդու հոգին կարոտով  
Կռունկի պես՝ հայրենի զմրուխտ ալղին է թոշում.  
Արևամերճ ու խնդուն իմ աշխարհում հոգեթով —  
Մարդու սերմած հատիկը հողում երբեք չի կորչում:

## ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Միւրով՝ Սողոմոն Սողոմոնյանին

Երբ իմ հայրենի հողն է կանաչում,  
Գարումն է շրջում արտով, արոտով,  
Ընկերներիս եք ես սիրով կանչում —  
Ու ձեռքով անում նրանց կարոտով:

Ինձ թվում է, թե գալիս են խաղով,  
Մեր գետի ափին զարկում են վրան,  
Լցնում են շուրջա հնչում ծիծաղով,  
Ու քեֆ ենք անում գինով փրփրան:

Զուռնան զլում է ձայնն իր քաղցրաթով,  
Խառնում իր երդը գետի կարկաշին,  
Հետո իջնում է երեկոն անդորր —  
Արծաթ աստղերի օղերն ականջին:

Գինին հոսում է աղբյուրի նման,  
Կանաչ այգու մեջ պարն է բոլորում,  
Մեր սեգ լեռների զեփյուռն աննման  
Հույզերիս ծովն է գրկին օրորում:

1942 թ.

## ԾԱՂԿՈՒՆՔ

Ելնում եմ դաշտը, շրջում անվերջ,  
Թրջում ոտքերս սառ ցողերով,  
Իմ դեմ փովում է գարուն մի պերճ  
Եվ սիրտս լցնում նոր խոհերով:

Ֆպտում, փալլում է ծիածանի  
Յոթը գույներով մի առավոտ,  
Ու ծափ են տալիս ոսկեծամի  
Յորյան արտերը անուշահոտ:

Ճամբորդի նման կարոտ սրտով  
Կանգնում է դեմս երգիս փերին,  
Աշքերը հառած արեգնաթով—  
Հայոց քերթության գագաթներին:

## ՄԵՌԵԼԸ

Տեսնո՞ւմ ես ոնց է դիակն այս սառել  
Ու ո՞նց է նայում սառուցի տակից,  
Արյունոտ ձեռքը բռունցք է արել  
Մեռել թշնամու դաժան գնդակից:

Մեռնելու պահին սրարզել է ձեռքը,  
Առաջ մղել մեր լեռնագնդերին,  
Ու վարդի նման բացվել է վերը —  
Մակարդվել նրա ջահել շրթերին:

Դնկի եմ իշնում ես դիակի մոտ,  
Կոտրում սառուցը ու ձկումը սառած,  
Համբուրում նրա ճակատն արյունոտ  
Ու առաջ գնում ոխից կատաղած...

1944 թ.

Պարտիզանական կայարան

## Ա Մ Ա Ռ Ը

Եկավ ամառը ուսերին զցած բորբ արեգակի ոսկի  
Ճիրանին,

Ինձ այցի եկավ երպիս սարյակը մեր այգու անուշ  
թութը բերանին:

Եկավ ամառը, ցորյան արտերը լճերի նման անուշ  
ծփալով,

Ուրախ ծափ տալով ու սվավալով հերանց են դնում  
ուս-ուսի տալով:

Եկավ ամառը, արտերն են մտնում ուրախ խմբերով  
Հնձլորները մեր,

Նրոնք գեռ երեկ, մարտադաշտերում մեր այսօրն էին.  
կոռում անվեհեր:

Եկավ ամառը, դաշտերում, այգում, մեր աշխատանքն  
է ծովի պես եռում,

Իմ հայրենիքի ամառը բեղուն մեր մառաններն է,  
բերքով հեղեղում:

Եկավ ամառը մեր ոսկեհանգերձ, մայեցին սարում  
ոչխարը, գառը,

Լցված հրճվանքի անափ հույզերով զնգաց իմ սրտի  
ոսկելար թառ:

# ԵՐԿՈՒ ՇԱՌ

Թերեք գետն է օձագալար,  
Կատաղաբար վշշում.  
Նրա ափին կանա՛շ, դալա՛ր,  
Երկու ծառ է խշշում...

Կանդմում եմ ես՝ լսում նրանց  
Մեղմ զրուցը տիսուր,  
Մոտիկ գյուղն է երկնի տակ բաց —  
Կրակի մեջ ծխում...

«Դեռ երեկ էր, մեզ մոտ բերին  
Ֆաշիստները անգութ,  
Երկու խիզախ պիտների,  
Սիրուն, ուկեգանդուր...

Մեր խշխում ճյուղերի տակ  
Սվինահար արին, |  
Խառնվեց նրանց արյունը տաք —  
Դետի ալիքներին... |

Հետո նրանց ժեռ քարափից  
Չորը գլորեցին,  
Դիժ թերեքի պղտոր ափին —  
Մենք մոր նման լացինք...»:

Ու լռեցին, հեռացա ես  
Յամի բեռն իմ սրտում,  
— Զեմ մոռանա ծառեր ես ձեր —  
Այս զրուցը տրտում:

## ԶՈՒԹԱԿԱՀԱՐՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ

Կանաչ, ծաղկուն մեր քաղաքում,  
Ծովի ափին մարմարակերտ,  
Նա ջութակ էր միշտ նվագում  
Սրտով սիրած աղջկա հետ:

Ջութակի թաղ, մեղմ նվագին  
Նա խառնում էր ձայնը իրա,  
Ու լեզու էր առնում անդին —  
Նրա երգը ծովի վրա...

Նվագում են, երգում խոսում,  
Նվագում են մինչ ուշ գիշեր,  
Ժողովուրդն է նրանց լսում  
Սրտների մեջ հույզեր ու շեր...

Կոխվ եղավ, թողին նրանք  
Մեր քաղաքը կանաչ ու զով,  
Թողած ետև երգ ու նվագ,  
Տարված փառքի նոր երազով...

Ճամբար բնկան, տղան՝ տանկիստ,  
Իսկ աղջիկը՝ գթության քույր.  
— Մնաս բարով զու ծաղկանիստ  
Քաղաք ուրախ ու ծաղկաբույր...

1942 թ. մայիս

Կերչի ուղմանձակատ

## Ք Ե Ֆ

ՔԵՖ ենք անում մեր կանաչ այսում՝ գեղանի,  
Կարմիր պինին է փըրփուր հորդում սեղանին:

Ուստա Մակին զլում է զուռնան, նաղարան,  
Սիրտ իմ քանի ջահնել ես, — խնդա, խաղ արա...

ՄԵՐ ծափերն են զիլ թնդում, երդ, ծիծաղ ու պար,  
ԱՇԽ, ինչո՞ւ է շուտ միմում օրը խելագար...

Վաղը այստեղ չենք լինի, — էլ, պինի՝, պինի՝,  
Դեսը բերեք մրգերով լիքը այդ սինին...

Դեսը բերեք խաղողն այդ, պարեք աղջիկներ, Հ  
Անուշ մալրեր օրջնեցեք ճանապարհը մեր...

Ու հիշեցեք մեզ սիրով, միք կանգնի տրտում  
Գուք միշտ էլ վառ կըմնաք պինվորի սրտում...

1942 թ.

## ՎԵՐՆՈՒՅ

Սարից զուզալ առուն կդա  
Անուշ, անուշ զլողալով,  
Սառ շուրթերով համբույր կտա  
Կերթա քարոտ ափին տալով:

Ու կերթա նա ծիածանի  
Ցոթ գույները տռած իր մեջ.  
Սարի հովը կը ծածածկնի—  
Ծաղիկների թերթերը պերճ:

Ես ունկնդիր երգին նրա  
Մանկությունն իմ կրերազեմ,  
Գտրնան կանաչ դաշտի վրա—  
Թևատարած կվաղվզեմ...

Այդ առվակի կարկաչն անուշ  
Մանուկ ձայնիս կնմանի.  
Նրան որպես ոսկի մի հուշ  
Առուն կառնի ու կը տառնի:



## Լ Ի Լ Ա

Կհանդիակե՞մ արդյոք ես քեզ,  
Բելոռուախ սիրուն աղջիկ,  
Խորի է նոտել, ա՛խ, շղիտես,  
Իմ սրտի մեջ սկատկերդ ջինջ...

Ինչքան էլ որ աշք եմ ածում,  
Ինչքան էլ որ ման եմ գալիս,  
Գոց տների դուռն եմ ծեծում,  
Չես երևում, ձայն չես տալիս...

Ահա եմի կանգնել եմ ես  
Չեր տան դեմի նեղ փողոցում,  
Էլ ինչո՞ւ ես, լիլա, այդպես,  
Հայ դինվորի սիրտը խոցում:

Ես քեզ համար կյանք եմ բերել,  
Խինդ եմ բերել, արև, դարուն,  
Որ դու նորից աղատ ապրես —  
Ծաղկածիծաղ մեր աշխարհում:

Ամեն ձորում, ամեն սարում  
Սպասում եմ ես քո դարձին,  
Սպասում եմ սիրոս արյուն—  
Հայացքիս տակ ճամբեքն անծիր...

Քո դարձին եմ ես սպասում,  
Լիլա', Լիլա', ո՞ւր մնացիր,  
Ո՞ր ծառի տակ զով, հովասուն  
Քեզ խոշտանգեց գիրմանացին...

Ամեն սարից, ամեն ձորից,  
Աւ դյուղերից քանդված, ավեր,  
Ես ձայներ եմ լսում նորից—  
Աղատության անմար ձայներ...

Բայց քո ձայնը ես չեմ լսում,  
Լիլա', որտեղ դու մնացիր,  
Լիլա, քեզ եմ ես սպասում.—  
Վեհաղարձիր, վերադարձիր...

1944 թ. Գոմիկ

## ՎՐԱՑՈՒՀԻՆ

Կորիվ էի դնում մի օր  
Զեր տան մոտով մանկուց սիրած,  
Հեծած նժույզն իմ թևավոր —  
Վրացուհի բարակիրան:

Դեմո ելար ծաղկաշորում,  
Խոպոպներդ ուսիդ ցրած,  
Նաղում էիր ու շորորում —  
Հղոր երթով մեր հմայված:

Մի փոմազ ծաղիկ ինձ նետեցիր,  
Նայեցիր ինձ աշքի տակով,  
Ինձ գերեցիր, ա՞խ, էրեցիր  
Անմար սիրո քո կրակով:

— Մարտ եմ պնում, բարով մնաս,  
— Բարով դառնաս, — կանչեցիր ինձ,  
Բաշկինակդ կախված մնաց —  
Գարնանային օդի մեջ ջինջ...

1942 թ. Ավշար:

## ՀԱՅՈՑ ԶԻՆՎՈՐԸ

Միշտ քաջ է եղել զինվորը հայոց,  
Բնյ որ Դավիթը՝ Սասնա գյուղագում,  
Աւճն ապառաժված, սրտում հուր ու բոց —  
Հաղթանակ տարած մարտերում բաղում:

Նա պաշտպանել է տունը պապական,  
Հորսվելն անուշ՝ իր շինափանի,  
Կյանքը խնդառատ ու անապական,  
Առած ծով ուժը քաջ լիոնականի:

Նա պաշտպանել է մեր դալարավետ  
Բարդենին խշշուն՝ Արաքսի ափին,  
Որ նրա կանաչ կատարը հավետ  
Գարունքվա շուշան ամառում սոսակի:

Հենց որ ոսոխը ինչպես վիշապ օձ  
Դարան է մտել սահմանից անդին,  
Իջել է դաշտը գյուղացին հայոց,  
Աւսին՝ լուսնեղջյուր իր սուր գերանդին:

Հայոց մայրերը ուզունքով  
Իրենց որդոցը կոհով են ճամպել,  
Գմբուխոտ դաշտերի դարնան ծաղկունքով —  
Նրանց ժեռ կրծքին պսակներ կապել:

Հայոց լեռները ամրոցներ են փակ,  
Հայոց ժայռերը՝ թրեր հավլումի,  
Գերեզմաններ են կիրճերը անտակ,—  
Ոսոխի համար շար ու վայրենի:

Նախրյան կանաչ հովտում, արսում,  
Դարումն իր ծաղկի Յունդերն է ցանել.  
Ու ժողովրդի բազմատանջ սրտում—  
Հայոց երկինքն է միշտ ծիածանել:

Խաղմաղաշտերում միշտ կը որոտան,  
Խաղմի շեփորը, թմրուկը հայոց,  
Հայոց օջախը, ծուխը Սասնա տան  
Չեն մնա երբեք դարերում անբոց:

Հայոց պինվորին, լեռներին, հողին,  
Երկրի փառքերն են սիրով դարդարում,  
Քանզի կյանքում մեր Հայոց պինվորին  
Մեծ առաջնորդն է մարտերի վարում:

1944 թ. Կովելի ռազմաճակատ

## ԱՐԵՎԱՆԱԳ

Լենինյան անհաղթ Կարմիր Բանակի  
Զորագնդերն են արշավում առաջ,  
Լցվել է սիրտս մեր Հաղթանակի  
Հզոր երգերով երկաթաշառաշ:

Ահա քայլում եմ ևս Հրավառած  
Եմ սիրտը դաժան մարտերի բոցում.  
Մեր ոտքերի տակ Հարություն առած  
Հայրենի հողն է արևազոծվում:

Մենք Հարություն ենք տալիս մայր Հողին,  
Եվ փրկություն ենք աշխարհին բերում.  
Լենինյան Կարմիր բանակն Հաղթողի  
Վերջին բերդերն է ոսոխից գերում:

Թրատում ենք մենք ցաման կայծակի  
Սուրսայր շեղբերով՝ թշնամուն անվերջ,  
Եվ բոցկլառում է արևածագի—  
Պայծառ շողերը մեր սրտերի մեջ:

1944 թ.

Կովելի ուղմաճակատ

## ՔՈՒՅՉՈԸ

Ես մի աղջիկ թողեցի  
Մարտադաշտերում,  
Եղնիկի աղև գեղեցիկ՝  
Շիծաղն աշքերում:

Մեր պթության քույրն էր նա,  
Մեր քաջ ընկերը,  
Զնդում էին միշտ նրա  
Ուրախ երգերը...

Կույլի դաշտում, խրամատոնմ  
Խիզախ ու արի,  
Միշտ վերքերն էր փաթաթում  
Վիրավորների:

Փայփայում էր, դուրդուրում  
Մեղ քրոջ նման,  
Ուժ ու կորով էր բերում  
Մխրանքը նրա:

Մի օր կույլի թեժ ժամին  
Վերքս կապելիս,  
Գնդակոծնց թշնամին  
Մթին ամպերից:

Դլիսից բռնած, լնկավ նա  
Անձայն ու լոփն,  
Հողին տվյալնք մենք նրա  
Արնաշաղախ դին...

Ու երդվեցինք մենք նրա  
Թարմ գերեզմանին,  
Որ անպատիժ չի մնա  
Անարդ թշնամին...

ՊՈՐԾԱԴ ԲԱՆԱԿ

## ՎԱՍՏԱԿԻ ԵՐԳԸ

Գլխիս մրա Հով է անում, օրորդում  
Կանաչ ուսին ոսկիծիբան արտի մեջ,  
Մեղմ զեփյուռից անուշ պար են բոլորում  
Յորյանների արտերն անծայր ու անվերջ:

Մարի դոշին Հունձ են անում մանգաղով,  
Լուսնի փայլով դերանդին է շամշափում,  
Մով երկնքից արեգակը խառ մաղով  
Արտի մրա իր բաց շողերն է թափում:

Ուրախ երգով կալվորները ժրաշան  
Ռոկեղեղձան խուրձն են թակում կալերում,  
Եվ ցորենը ասես—ովունք ու մարշան  
Համայնական մառաններն է հեղեղում:

Բարձրանում է, խառնվում երկնի մարմանդին  
Թոնիրներից թանձր ծուխը քովերով,  
Եվ լցովում է տքնակաստակ մեր Հովին  
Ցորեն հացի տխորժալուր բուրմունքով:

## ՏԱՆԿԻՍԻ ՍԵՐԸ

Տանկն իմ կպնդնեց դետի ափին,  
Մի ծաղկանիստ ձորի մոտ,  
Մի հայ աղջիկ՝ նազում, նրբին  
Դեմս հլավ կրակուտ...

Դուրս եմ գալիս ես իմ տանկից,  
Տիր ջուր ուզեմ, սառը ջուր,  
Կուժը թողած քարի տակին—  
Ինչ որ բան է բրթմնջում...

Կանգնում եմ ես, սրառվ հրկեղ,  
Դետի ափին կարկաչուն,  
Կուժը թողած եղնիկի ոկն—  
Դեպի տուն է նա միախշում...

Վերցնում եմ ես լիքը ջրով  
Կուժը՝ հպում շրթերիս...  
Ա՛խ, լցնում է սիրառ սիրով—  
Չքնաղագեղ այդ մերին...

Ետ եմ նայում, գաղտագողի՝  
Ինձ է նայում նա երկչուտ,  
Նրա դեմքի շարմաղ շողից  
Դողում են իմ ձեռ ու ոտ...

— Մո'տ եկ, աղջիկ,— կանչում եմ ես,—  
Ինչ ես կանգնել մոլորված,  
Մւսնեմ, թե որ ձեռ տամ ես քեզ,  
Մոտիկ արի, սիրոդ բաց...

Հայուսն է նա ու տուն վախչուն,  
Կուժը թողած դեռափին,  
Պառակ մայրն է նրան կանչուն—  
Չեւքը դրած ձևելատին...

Եցնում եմ ես կուժը ջրով,  
Առնում ինձ հետ, մտնում տանկ,  
Ու կանչում եմ,— մնաս բարով  
Առաջին սեր ջերմ ու տաք...

Մազմի դաշտ եմ գնում աղջիկ,  
Այնտեղ գունդն է կալում մեր,  
Թե՛ ծարապին, ջուրն այս վճիտ  
Անհագ սիրով կխմեմ...

Թե՛ վիրավոր մի քաջ մարտիկ  
Ստո ջուր ուղի, կասեմ՝ առ,—  
Կասեմ,— կուժն այս նվեր թողեց  
Մի հայ աղջիկ՝ ծաղկավառ:

Տանում եմ ես կուժդ ինձ հետ,  
Թողնում սիրոս քեղ վկաւ,  
Վիրապարձիս կրերեմ ետ,—  
Աղջիկ, սեր իմ, արևելտ...

Թի դարձա ես, տե՛ս, այս անդամ,  
Վառված սիրով կգամ ես,  
Բնկերներով, ծաղկով կըդամ  
Ու սիրած կին կառնեմ քեղ...

1944 թ. Կովելի ռազմաճակատ

## Գ Ա Զ Ե Լ

Վահան Տերյանին

Չիր տան դեմի կանաչ բախչում երաղիդ մեջ մի ծառ  
տեսար,

Արեգնաթուլ մեր գալիքը գարունքից էլ պայծառ տեսար:

Հանկարծ փուլեց աշքերիդ դեմ մեր նակրին ավեր  
դառած,

Երկնքի մութ ոլորտներում մի բոցասոր կայծակ տեսար:

Ու բոցասոր այդ կայծակը իջավ գլխին հին աշխարհի,  
Խնդությունդ օվկիանի պես անհուն ու խոր, անծայր

Ել գալիքը հայոց երկրի, սերունդներիդ գալոց  
ծաղկուն—

Կոմունիդմբ իր շողերով արեգակնաց էլ վառ տեսար:

## Զ Ո Ն

Մ. ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒՆ

Երգդ սուր է,  
Երգդ՝ արկ.  
Անմար հուր է  
Կրծքիս տակ:

Մեր լույս ու ոլիբճ  
Աշխարհքում,  
Մեր հոգու միջ  
Ու երգում—

Քո հարատե  
Շունչը կա,  
Երգի արև  
Ու արքա:

Երգդ սիրովն է  
Իմ դարի,  
Երգիդ հուրը  
Չի մարի:

## ՎԵՐԱԴԱՐՁ

Իմ վերադարձի ճամբերի վրա  
Ծաղիկներն են վառ ծիծաղում, բուրում,  
Ծնկի հմ գալիս սիրով հուրհրան  
Եզ իմ հայրենի հողը համբուրում:

Ճամբուրում եմ ես նրա արևիա  
Կանաչ աշքերը ու սիրտը գարուն,  
Հայրենի հողից անուշ բան չկա  
Իմ կարկաշահոս հույզի աշխարհում:

Ես քեզ համար իմ կոփիվ զնացել,  
Հայրենական հող, որ ազատ մնաս,  
Որ տարին բոլոր ծլես, կանաչես,  
Կարկուտ շտեսնես քո դլիսի վրա:

## ՍԵՐԸ

Սերը մարդու ծարավ սրտին,  
Էրկած սրտին ջուր կտա,  
Ենավորված ալ ձին տակին  
Յարս սիրով տուն կըդա:

Տուն կըդա իմ սիրած տղան,  
Հայրենիքի քաջ որդին,  
Վյգու կանաչ խոտի վրա  
Հայրս ոշխար կմորթի:

Ու քեֆ կանենք շարրաթածոր  
Նուն դինով, աղջիկնե՛ր,  
Զիլ կիբնդան դաշտ, լեռ ու ձոր  
Երգից, պարից, խաղից մեր:

\*

## ՀՈՂՄԸ

Հողմն է լալիս, հողմն է փշում  
Զյան հյուսքեր շալակին,  
Ծառս է լինում ու մոնչում—  
Անտոն, անտեր, տարագիր...

Շրջմուիկի նման անտոն  
Զարկվում է նա պատեպատ,  
Մեկ վնգատում ձորում, հովտում,  
Մեկ էլ՝ կըծկվում սարի տակ:

Հետո թոշում սրեր առած  
Դեպի դիրքերն հայրենի,  
Զարկում է մերկ, ցրաից սառած—  
Տևողներին վայրենի...

Հողմն է լալիս, հողմն է փշում  
Զյան հյուսքեր շալակին,  
Ծառս է լինում ու մոնչում—  
Անտոն, անտեր, տարագիր...

1943 թ.  
Գործող թանակ

## ԱՐԻԲԵԶԱՆ

Մեղք են ծորասմ աղբյուրներդ, կաթ են ջրերը քո վետերի,  
Հագել ես դու խառ ու բեհեզ, կանգնել իմ գեմ ասես փերին  
Գեղածիծաղ քո դաշտերում, այգիներում ու մարգերում  
Գարնանային ծաղիկներդ են անմահական հոտով բուրում:  
Ես լինինյան մի հայ պինվոր, տուած դաշույն, ոսմբ ու  
ական,  
Քո որդոց հետ առյուծասիրու մարտ եմ մղել հերոսական:  
Քաջ Քյոռ-օզու, Սասնա Դավթի կայծակնածին թրերն  
առած,  
Թրատել ենք շար հոներին, Հաղթանակով թոել առաջ,  
Որ դու կյանքում կանաչ մնաս ու ծիծաղես որպես գարոն,  
Որ քո փառքը միշտ էլ զնդա զմբուխտաշար մեր  
աշխարհում:

Որ բախտավոր կյանքով ապրես արենելքի կանաչ դռան,  
Որ քո բեֆի գավաթներում ժպտա դինին անուշ նոռան:  
Որ սիրելի տուաջնորդը, երբ հյուր լինի կրկին մնդ մոտ,  
Ժպտան նրա ոտքերի տակ պարտեզներդ անուշահատ:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայրենի գյուղում թողեցի նրան,  
Թողեցի նրան հայրենի ձորում,  
Կանգնել էր քարձր մի քարի վրա—  
Ու թաշկինակն էր տխուր օրորում...

Ես նրան տեսա անտառի գրկում,  
Ես նրան տեսա Սոֆի ափերին,  
Նա շար հոներից կամուրջն էր հսկում  
Հայացքը՝ անցող դարձող ամպերին...

— Որտե՞ղ թողեցի քեզ, սիրած աղջիկ,  
Հիմա որտե՞ղ եմ հանդիպում ես քեզ,  
Ուրախությունից հանկարծ ճըշացիր,  
Ու ձեռքդ մնաց կախված օդի մեջ...

Գնացքը կծկեց դաշտերը ձյունոտ,  
Սոֆը, կամուրջը ետև մնացին,  
Նա կանգնած մնաց երկաթդի մոտ—  
Եվ աշքը մնաց թոշող դնացքին...

1944 թ.  
Գոմել

## ԲԱՑՎՈՒՄ Է ՕՐԸ

Յացվում է օրը դարնան գեղեցիկ,  
Մութի սև քողն է սարերում կորչում.  
Ստորոտներով լեռների վերձիպ  
Զինջ վտակներն են զվարթ խոխոջում:

Կանգնած բարձրաբերձ լեռան գագաթին,  
Հայացքս հառած հանդերին խաղաղ,  
Նայում եմ մեր շեն դյուզերին անթիվ,  
Երգ, ծիծաղ ու պար սրտիս մեջ թաղած—  
Իմ դեմք՝ ձորեր, հովիտներ ծաղկուն,  
Ծփում են կանաչ լճերն արտերի,  
Աղջիկները մեր պուտ են հավաքում—  
Ծաղկեփոշիներ ցանած այտերին...

Միթե՝ թշնամին պիտի ավերի—  
Գեղեցկությունն այս, լիությունը ծով,  
Հանձնի բոլորը մահվան հողմերին  
Ու Հայրենիքն իմ լցնի կոկիծով...

Ո՞չ, այդ չի լինի,— քաջեր կոմիասի,  
Ելեք մարտադաշտ զենք, զրոհ հագած,  
Շր կոխան շանի սոսնիը դադիր—  
Մեր տքնությունը լույսով հառագած:

## ՄԻՏՍ ԵՆ ԳԱԼԻՒ

Երազում՝ ահա ես քեզ համբուլում,  
Տարվում՝ եմ նորից քաղցր երազով,  
Նորից դարունն-է իմ շուրջը բուրում—  
Փաթաթվում վզիս տղջկա նազով:

Միտս են գալիս մեր սարերը մով,  
Մեր անտառները կանաչառազարթ,  
Ու ձախր են անում ճերմակ երամով  
Արագիլները կտպույտում խաղագ:

Նորից լսում եմ գութանավորի  
Աիր՝ քաղցր երզր հայրենի հողում,  
Եվ թվում է թե անձկությամբ նորից  
Շուրջս ծտերն են անուշ ճովողում...

Կանգնում են գեմս ցորեն արտերի  
Ոսկի ծովերը մեր կոլխոզական,  
Կարծես դարձել եմ ես գոռ մարտերից  
Եվ աշխարհ մտել մի հերիաթական:

Ես ման եմ գալիս ծաղիկների մեջ,  
Աղջիկների հետ զվարթ զնգոցով,  
Արտնք իմ սիրտը լցրել են անշեշ—  
Զահել օրերի հրեղեն բոցով:

Թպառում է կանաչ ալպեստահներում  
Նեկտարից անուշ ծովը մրգերի,  
Երդում են, խաղում նրանց ստվերում  
Սիրուն խմբերը մեր մանուկների:

Թող կանաչ լինի, միշտ ձեր գարունը,  
Որ խնդուն լինեք իմ հայրենիքում,  
Հպարտ եմ պահում իս ձեր անունը  
Հանգստյան ժամին, թե պառկած՝ դիրքումն  
ես ձեզ համար եմ մարտերն այս մղում:  
Օտար աշխարհի մույթ որչերի մոտ,  
Որ աղատ ապրեք հայրենի հողում,  
Որ ձեր դալիքը լինի արեօտ:

Ա

1944 թ.  
Կովելի սագմաճակատ

# ԻՆՉ ԵՍ ԿԱՆՉՈՒՄ

(Նմանություն)

Ինձ ես կանշում, ինձ ես կանշում,  
Ինձ ես կանշում,— տուն արի,  
Կանդնած գյուղի ճամբամիջում,  
Բա՛րձր, բա՛րձր մի քարի:

Են ե՞րբ էր, որդու զնացիր,  
Ասիր,— կդամ շատ շուտով,  
Ես կարոտից էնքան լացի,  
Որ արցունքս կապեց ծով:

Ես լսում եմ ռազմակաշտում  
Անուշ ձայնդ, մայր անդին.  
Գլխիո մահն է սի, անկշտում—  
Ճոճում իր սուր դերանդին:

Ու քո ձայնից ովի առած,  
Լցված անսանձ զայրույթով,  
Կովում եմ ես առյօտ դառած,  
Որ տուն դառնամ, մայր, շուտով:

Բայց դու էլի ինձ ես կանշում,  
Ինձ ես կանշում,— տուն արի,  
Կանդնած գյուղի ճամբամիջում,  
Բա՛րձր, բա՛րձր մի քարի:

1944 թ. մայիս  
Առվելի ռազմաճակատ

## ՅԱՐ ՈՒՆԵՒ

Յար ոնեի, շարմազ էր նտ,  
էշխով լիքը մի խազ էր նա:

Վարդի թերթին պուտ-պուտութիկ  
Երկնից կաթած մի շազ էր նա:

Մրտիս համար սիրակարուտ  
Մրգով լիքը մի բազ էր նա:

Մրտիս վրա բորբ արևից  
Իջած լույսի շափազ էր նա:

Զար հոները եկան տարան,  
Էն ի՞նչ զուլում աշխարհ էր նա:

## ՀԱՆԿԱՐԾ ԳԱՅԻՆ

Հեռուներից հանկարծ դային  
Ու ասեին՝ գալիս ևս դու.  
Խնդությունից լայի՛, լայի՛,  
Վեր կենայի, զնայի տուն:

Տեսնեի քեզ մեր բակի մեջ  
Կանգնած շվար ու մոլորուն.  
Զինջ աշքերիդ հրով անշեջ,  
Ռոդի՛ս, ինձ ևս դու որոնսամ:

Մոտենայի դովդողալով,  
Կարստ սրտով քեզ գրկեի,  
Մերթ խնդալով, մերթ էլ լալով  
Քեզ ծոցիս մեջ օրորեի:

Ու թվար ինձ, որ ևս անվերչ՝  
Խմ ծերության այս օրերում՝  
Մեղմած սիրով թերիս մեջ—  
Օրորում եմ քեզ բարուրում:

## ԱՆԲՅՈՒՆԻ ՄՈՏ

Այլ, այսանդ էր, այս ծառի մոտ, աղբյուրի մոտ  
այս խոխոջում,  
Այս սեր ավինք ու սեր առանք և ուստեցինք սիրել  
իրար,  
Նոր էր կյանքի կանաչ ճամբին սիրո ծառը մեռ  
բողբոջում,  
Երբ շառաշեց սազմի փողը իմ հայրենի հողի վրա:  
  
Ու սազմի դաշտ ևս դնացի սերըդ պահած իմ սրտի  
մեջ,  
Թռղեցի քեզ կանգնած մենակ այս պլդան աղբյուրի  
մոտ,  
Ես գիտեմ, որ դու կարուավ իմ ճամփան ես պահել  
անվերջ  
Գիրկդ լցրած մեր դաշտերի ծաղիկներով անուշանոտ:  
  
Զաղախեցինք մենք թշնամուն, մոխիր դարձրինք իր  
սև որջում,  
Խաղաղություն իշավ նորից երկրիս վրա երտնավետ.  
Ահա եկել նույն ծառի մոտ, աղբյուրի մոտ նույն  
խոխոջուն  
Հանդիպում եմ ևս քեզ նորից արցունքով թաց  
սափորիդ հետ:

Հմայված քո տեսք ու նազով այս ծառի տակ զոլ,  
Հովասոն,  
Հարբած ծաղկանց անմահական անուշ Հոսանք  
Դարաբաղի,  
Մեր մանկության ջինջ աղբյուրի մեղմ կաքեաչն եմ  
սիրով լսում  
Եվ իմ սրտի սուր ականջով ականջ դնում սրախոյ  
իտպին:

Այս սափորն այդ, սիրած աղջիկ, Դարաբարա, զուգալ  
ջրով,  
Թե ողջ աղբրի շուրը ինձ տուա, մեկ է, սիրտս չի  
հովանա.  
Կարոտել եմ ես քո ջրին, քո Համբուլիրին ջերմաղորով,  
Տուր, թող խմեմ, խմեմ տնվեց, սիրտս սիրով քո  
ծովանա:

## ԲԱՑ ԱՐԱ ԴՈՒՇԵ

— Բաց արա դուռը, ես եմ, մերիկ ջան,  
Բաց արա, մերիկ, կովից եմ գալիս.  
Ովախությունից որպես զույգ մարզան  
Մորըս աշքերը պեծին են տալիս...  
Նա չի հավատում, որ դյուլ եմ եկել,  
Մեկ լաց է լինում, մեկ էլ ծիծաղում,  
Իր տաք ձեռքերով զլուխս գրկել —  
Ճակտիս՝ կարոտի արցոմիք է մաղում...

1942 թ. Գևորգ Եղիազար

## ԿԱՐԿԱԶ

Ե. Գարյանին

Թշ մի անցյալ չի մշուշի  
Իմ հուզվելը այսքան վառուն,  
Անուշ երգեր ինձ կհուշի—  
Քո երգերի զվարի տռուն:

Քո դիլ կանչով ու կարկաշով,  
Ոնց կիրճերով անցնող վտակ,  
Միրտս ցցրիր երգի շնչով—  
Իմ հայրենի երկնքի տակ:

Հնչիր, կանչիր ու կարկաշիր  
Լևոնակարկաշ քո երգերով,  
Իջիր թափով ու շառաշիր,  
Թոփիր ուազմի մեր դիրքերով...

Թող երգը քո դաշույն լինի,  
Աշուն լինի, ամառ հասուն,  
Որ ըմպեմ ես երգիդ գինին—  
Ետոերի տակ մեր հովասուն:

## ՊԱՊԱ

... Աւղեց ինչոր բան առել, պատ շնկավ լեզուն,  
Նրա ճերմակ հայացքն է իմ սիրտը կիղում...  
Առնում է նա մի բուռ հող, սիրով գուրզուրում,  
Հետո հողն այդ ոսկեցող տաք-տաք համբուրում...  
Ու առում է,—հողն այս առ, համբուրիր, օ'ղու,  
Հայրենի հողը սիրովի սիրտը չի դողում...  
Թե սսոխը ժանտ ու նեռ, խարդախ ու սողուն,  
Եկավ, խլեց հողը մեր, — կորած ենք, օ'ղու...  
Նամուտ արա, նամուտով վերադարձիր տուն,  
Զէ՞ որ լիքն են քո հույսով՝ մայր, և՛ հայր, և՛ քույր  
Լինեն զաժան պայքարի թշնամու դիմ նեռ,  
Կյանքի գնով կազատես Հայրենիքը մեր...  
Թե վախենաս, շկովիս, լաց լինես մարտում,  
Էլ շտեմնեմ կյանքում քեզ, շրառնաս էլ տուն...  
Հետո լոեց, զրկեց ինձ անհուն կարուտավ, —  
Ժողտաց ամոան օրը ջինջ, լի ծաղկի հոտով...  
Ու դդակն է ճոճում նա մարմանդ օդի միջ, —  
Հրաժեշտ եմ ես տալիս դաշտերին մեր պերճ:  
Աղջիկների պես անուշ ծառերը մրգի  
Աչք ու ունքով են անում ճամբի եղերքին:  
Ու զնում եմ, ետևում թողած դաշտ ու ձոր,  
Մեր պյուղն էլ չի երեւում, մնաց ձորում խոր:  
Ռւտիների շվարում թողի պատիս ծեր, —  
Ինչ որ երգ էր նվազում ամառեղ մի ծիծեռ:

Գործող Բանակ.  
1942

## ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Տեսա մոմի պես մի գունատ աղջիկ,  
Մի վախտ աղջիկ ճերմակ շորերով,  
Նա ման էր գալիս արցունքն աշքերին—  
Նիրմաթմբերը կամաց շոյելով...

Նա լուս շրջում էր զերեզմանոցում,  
Երկար ծամերը ուսերին ցրած.  
Անուշ մի կարոտ սիրտն էր սղոցում—  
Բոց ծաղիկներով խտիոր լցրած...

Երբ իջավ դարնան մարմանդ երեկոն,  
Տուն վերադարձավ հողվորը արտից,  
Նա դոշին փակցրած մի վարդի կոկոն,  
Ռոը բասել էր սիրատանց սրտից,—

Պահեց, իսկ դրվի ծաղիկները բոց  
Շաղ տվեց կանաչ շիրմաթմբերին,  
Ու ծովի նման սիրտը ալեկոծ,  
Տուն վերադարձավ նա կես գիշերին...

1944 թ. Մայիս.  
Կովելի ռազմաճակատ

## ԱՅՍ ԳԱՐՈՒՆԸ

Այս գարունը, այս գարունը,  
Այս գարունը էլ չի դնա.  
Այս գարնան պես քո անունը  
Իմ սրտի մեջ զինջ կըմնա:

Այս գարնանը, այս գարնանը  
Շորն են կարտամ իմ հարսանքի.  
Սպասում են ինձ մեր տանը —  
Միրունները մեր քաղաքի:

Այս գարունը, այս գարունը,  
Ես եմ բերում բռնած ձեսքիս,  
Վարդ է դառել իմ արյունը —  
Փովել դարձի իմ ճամբեքին:

1945 թ.  
Մայիս

## ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ

Գլխիդ զով անեմ  
Օրոր արա,  
Քո ցավը տանեմ  
Քաղցր բալա:

Դուրսը դարուն է,  
Ծառն է ծաղկում.  
Զանգակ առուն է—  
Երզում անրուն:

Ժպտում են անծայր  
Անհուն մովում  
Սստղերը՝ պայծառ  
Երկնի ծովում:

Զինջ է, Հուբհրան  
Կյանքիդ ճամբեն,  
Էլ գլխիդ վրա  
Զկան ամպեր:

Քո հայրը երեկ  
Կոհիլ արավ  
Ֆաշիստների դեմ  
Արյան ծարավ.

Կոհյ զալիքդ  
Ու դարձավ տուն,  
Որ իմ բալիկը  
Լինի խնդուն։

Դլխիդ ղով անեմ  
Օրոր արա,  
Քո ցավը տանեմ  
Քաղցր բալա։

## ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Նստել եմ ահա սառ ու խոխոջում  
Այս վտակի մոտ լեռներից վաղող,  
Ծլում է հողը, ծառն է բողբոջում  
Եկ հոգիս լցնում անուշ երաղով:

Մի նախշուն արտուր համերդ է սարքի  
Դարնան բոյ քաշած երկնամով արտուր,  
Նա թիթեռներին շուրջն է հավաքել --  
Ու դարնան դալն է խինդով ավետում:

Մի հոգիվ թավիշ սարերի լանջում  
Ոչխարի հոտը արել է սարով,  
Կանգնել է քարին ու ինձ է կանչում  
Խրոխտ իր ձենը զցած աշխարհով:

Զնդում է դաշտում դութանավորի  
Դյութական երդը հայրենակարկաչ,  
Իմ հայրենիքում դարուն է նորից,  
Իսկ իմ սրտի մեջ հազար հույզ ու կանչ:

# ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ

1.

Ուտիների շուքի տակ՝  
Ամռան ծաղկավոր,  
Վերադարձիդ ճամբան ևմ  
Պահում ամէն օր:

Փեշս լցըած մրգերով  
Քնդ ևմ սպասում,  
Ինձ թվում է, թե ձիուդ  
Դոփիլուն ևմ լռում:

Սպասում ևմ կարուտով  
Քո վերադարձին,  
Սչըս դցած փոշեպատ  
Ճամբերին անծիր...

Թութն էլ հասալ, կեռասն էլ,  
Չնս գալիս, շնկաս,  
Էսօր շնկար, տսում ևմ  
Գոցե վաղը դաս:

Օրը մթնեց, տուն դնամ,  
Կղամ դեռ ծեղին,  
Փեշիս միրդն ևմ բաժանում  
Ընկեր - աղերքին:

Կարուել է սիրտո քեզ,  
Ինչո՞ւ չես գալիս,  
Արի՛, պառավ մորդ տես  
Ու դնա էլի:

# ՊԱՏԱՄԻԱՆ

2.

— Աստղերի տակ, դիշերով,  
Ես քեզ համբուրում,  
Տարված անուշ հուշերով  
Նամակ ևմ պրում...

Գրում ևմ քեզ Բեռլինից  
Խարստներով խոր,  
Մեղսանքների այս բնից —  
Հեռու, հեռավոր...

Այն սա էր, որ մեր կյանքին  
Մահ էր հորջորջում,  
Որ մեզ խեղղի՝ տանջանքի  
Իր մթին որջում...

Ստալինի բանակը,  
Միտքը թևավոր,  
Շատ երկրներ աղատեց —  
Վշտից սեվավոր...

Քեփս լավ է միշտ լինում,  
Դու մի մտածի,  
Էլ գլուխս չեմ դնում  
Ես քարե բարձին...

Կդամ, քիչ էլ սպասիր,  
Հո՛ չեմ մնալու,  
Դեռ իմ երկրին, մերիկ ջան,  
Պարտք ունեմ տալու:

## ԻՄ ԵՐԳԸ

Կյանքիս ծառի ճյուղիս վրա  
Դու մի կանաչ-կանաչ տերեւ,  
ևս սոսափն եմ լսում նրա  
Ամեն դարնան պլխիս վերեւ:

Աշնան դեղին սաղարթի հետ  
Պոկվում ես ու ընկնում գետին,  
Քեզ առնում են, քշում անհետ  
Ալիքները փրփուր դետի:

Ի՞նչ կլիներ կյանքիս ծառին  
Մնայիր միշտ կանաչ շորով,  
Որ լսեի ես ծիծառի —  
Անուշ երգը տարին բոլոր:

## ՍԵՐԸԴ

Սերըդ սրտիս հուր կտա,  
ինձ կովի մեջ սուր կտա:

Թև արտ լինեմ ցորյանի  
Նա ինձ զռւալ ջուր կտա:

Թև խաղաղ քուն շոմենամ,  
Նա ինձ անուշ քուն կտա:

Հույզերով լի իմ սրտին  
Երդի պայծառ հուն կտա:

## ՄԻ ԱՂՋԿԱ

Դու կակաշ ես, արև աշ ես,  
Անմար հուր ես իմ սրտում,  
Զուզալ աղբըի մեղմ կարկաշ ես  
Կյանքիս կանաչ հովիտում:

Աստ, ե՞րբ ես մեր տուն գալու  
Հարսանեկան շորերով,  
Ես պատրաստ եմ խինդից լալու  
Սարերն ընկած՝ օրերով:

Միայն թե եկ, հրավառիր,  
Կյանքս զուգիր ծաղկունքով,  
Որ իմ սերը թերը առնի  
Թռնի մարմանդ երկնքով:

## ՈՒՐԵՆԻ

Հարցմունք՝ արի ես մի օր  
Մի ուռենու սգավոր,  
— Այդ ի՞նչ միշտ է քեզ տանջում,  
Ի՞նչ ես լոխն անրջում:  
Տարին բոլոր տիսրամած,  
Մոլոր, շվար, կարկամած,  
Յարը կորցրած հարսի պես  
Հալ ու մաշ ես անում քեզ;  
Լաց ես լինում, մորմոքում,  
Ինչոր միշտ կա քո հոգում:  
Բերված կարկաշ շրերին —  
Պատմիր ցավդ ուռենի...  
— Ես մի ծառ եմ՝ բար շունեմ,  
Տակս հերկ ու վար շունեմ:  
Անուշ մրդեր չեմ բերում,  
Ծաղկի նման չեմ բուրում:  
Նալիր, մի տես՝ դեղձենին,  
Խնձորենին, տանձենին  
Պսակվել են մրդերով,  
Գյուղը լցրել երդերով:  
Իսկ ես ծառս սգավոր  
Ի՞նչ բարիք եմ տալիս որ:  
Դրա համար միշտ այսպես  
Տիսոր կյանք եմ ապրում ես:

## ԵՐԵԿՈ

Թառում է լուռ դաշտի վրա  
Աստեղաբիթ երեկոն,  
Ծղրիդներն են կանչում ուրախ  
Լցնում դաշտը համերգով:

Ծնկշնկում են հովերն անուշ,  
Ծոյսում վարսերն արտերի,  
Համբյուրներ են կարծես քաղում  
Նրանց ոսկի այտերից:

Տուն եմ գնում քրտնաշաղախ,  
Առած վաստակն իմ բերքի,  
Հեռվում դյուլն է ննջում խաղաղ  
Պառկած ձորի եղերքին:

1941 թ.

## ԵՍ ՄԻ ԿԱՆԱԶ ԾԱՌ ԼԻՆԵՄ

Ես մի կանաշ ծառ լինեմ, լինեմ ծաղկած խնձորի,  
Արեգնաթով, ծաղկաբույր դրախտ ային այգու մեջ.  
Սարից եկող քնքշաթե հովն ինձ շուքով օրորի  
Ու բուրմունքս տարածի հայրենիքում իմ անվեճք:

Դա սիրածս ինձ այցի, կանգնի ծաղկած ճյուղքիս տակ՝  
Նրա խոպոպ վարսերին պսակ դնեմ հարսանքի.  
Նստի իմ զով ստվերում, սեր տամ նրան անտպակ,  
Որ հագենա նեկտարով արեաշող իմ կյանքի:

Դա տոթակեղ ամառը, գլխիս ոսկին իր մաղի,  
Խմեմ նրա վառ ցոլքը ու ծանրանամ մրգերով,  
Սրտով սիրած աղջիկն իմ ուրախանա, ծիծաղի  
Հավքերի հետ ձեն տա ու շուրջս լցնի երգերով:

Հետո իշնի ոսկեռը, ոսկեղեղին մի աշուն,  
Ու նա թեքի ճյուղերս, միրզս քաղի ու դնա.  
Աշնան քամին պոկոտի տերեներս խշխշուն,  
Ցրի մեր լայն դաշտերով, ձմեռ իշնի ինձ վրա:

Կախվի գլխիս ձմեռը, ձյունի ճերմակ մալանշով  
Ջարդարեմ իմ ճյուղերը, կուշ գամ ցրտից ոնց պտուավ,  
Ինձ այցի գա սիրածն իմ, հիշի՝, հիշի՝ հառաշով,  
Ու տրտնջա, որ իզուր միրզս քաղեց ու տարտիվ:

## ԱՇԽԱՆԱՄՈՒՏ

Աշնան հողմի բերանում  
Ոչ մի տերեւ շմնաց.  
Յուրա է: Օրն է վերջանում  
Աշքերի մեջ վիշտ ու լաց:  
Աշտ պառակ մի խեղճ կին  
Աշնան նման տիրամած,  
Շանր մի բեռ շալակին,  
Երբ խրճիթն է մտնում բաց.  
Տան անկյունում ժպտերիս  
Տեսնում է նա իր որդուն,  
Բեխը ծլած հաղթ ու վես,  
Թագմադաշտից եկած տուն...  
Որդու դիրին է ընկնում նա,  
Շանր բեռը շալակին...  
Սիրած որդին թի տուն զա  
Այդակս կանի ամեն կին...

1942 թ. Դրիմի ստումտճակատ

## Կ Ա Թ Ը

Երազ տեսա՝ հինգ նոր պատկած եմ ևս դիրքում,  
Մաղմադաշտի վրա ձմռան բուքն է երգում...

Իմ դիմ սաղմադաշտն է կորչում ծխի տմապում,  
Մի ձեռք՝ նուրբ, զգայուն, իմ վերքերն է կապում...

Կապեց նա վերքերն իմ, լաց եղամ ու հուզվեց,  
Մեժ գնդակից խոցված սիրտս պաղ ջուր ուղեց...

— Զուրբ վնաս է քեզ, — ասում է ու լալիս,  
Ու սպաղ ջրի տեղը ինձ տաք կաթ է տալիս

Խմում իմ ես, կաթն այդ ինձ ուշքի է քերում,  
Իմ սրտի մեջ նորից մարտի թափն է եռում...

Արդեն էլ շեմ դպում ես ցավն իմ վերքերի,  
Այս, դա անուշ կաթն էր իմ մոր ստինքների:

1942 թ. մայիս  
Ղրիմի սաղմաճակտութեան

## Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր

Մեր տան դեմի սարի լանջում  
Տիրաթախիծ ու մոլոր,  
Մի աղջիկ է մենակ շրջում  
Ու ինձ փնտրում ամեն օր:

Փնտրում է ինձ, բայց չի գտնում,  
Եվ մի օր էլ պիշերով  
Հույսը հատած ձորն է մտնում  
Սարի կանաչ փեշերով:

Ձորն է մտնում՝ սիրով կրակ,  
Դուրս չի գալիս էլ ձորից,  
Ու դառնում է մի սառնորակ  
Ջուլալ աղբյուր այդ օրից:

## ԱՐԵՎԱ

Քացվում է լույսը, երկնակամարում:  
Նման մոմերի դողդոջ լույսերին  
Առըտվան քամուց հանդշում են, մարում  
Վերջին փնջերը աղոտ աստղերի:

Դաշտերի վրա իմ հայրենիքի  
Մի տես, ինչ սիրում արև է ծագում,  
Ասկեզոծելով դեմքը երկնքի  
Ռդը բնությունն է իր մեջ հավաքում:

Երկնքի ծիրան պիրքը թերթելով  
Լեռնալանջերով իջնում է նա ցած,  
Նրա ջերմ հուրն են ոսկի շուրթերով  
Խմում արտերը քնից արթնացած:

Նա շունչ է տալիս հողին ու ծառին,  
Լցնում սրտերը անափ հույզերով.  
Առանց խարության-արար աշխարհին  
Բաժանում հուրն իր ջերմառատ սիրով:

## ՊՈՒՐԱԿՈՒՄ

Այս խշխշուն պուրակում,  
Հովուում այս կանաչ  
Հիշում ե՞ս, մենք կրակում,  
Իռվում էինք քաջ...

Կովում էինք քաջաբար,  
Սնվախ ու անդող,  
Մինչև մութը իջներ վար—  
Ծածկեր ծով ու հող...

Օրվա մարտը վերջացած,  
Նստած իրար մոտ,  
Հիշում էինք մեր անցած  
Օրերն արևոտ...

— Թի կենդանի մնացի,  
Վերագարձա տուն,  
Էնկեր իմ, բայլ իմացիր,  
Հենց նույն իրիկուն,

Ամուսնանամ պիտի ես  
Զուռնով, նազարով,  
Հարսանիքն իմ կը լցնես—  
Քեզ ու խաղերով...

Նա մի հոտով մանուշակ,  
Թովուուն մի լոր,  
Աշքեր ոմի նա շուշան,  
Հասակ՝ մեղմօրոր...

Նրան խոսք եմ տվել հս,—  
Պատմում էիր դու,  
Ու կարստով ողջակեղ—  
Թռչում էիր տուն...

Իսկ հս անհուն կարստով  
Մորըս էի հիշում,  
Դրպանները լի մրդով,—  
Ոնց ոսկի աշուն...

Հիշում էի,—նա տրտում,  
Աշքերի մեջ՝ լաց,  
Կոփի ճամբեց իր որդուն—  
Իր չերմ դիրկը բաց...

Ու տարված մենք երազով,  
Բայց հոգով դվարթ,  
Թռչում էինք կանաչ, զով,  
Դաշտերը մեր վարդ...

Խոսում էինք, մինչև որ,  
Մաւթի էր լուսանում,  
Մինչ արկերի որոտն էր —  
Հողը սասանում...

Նորից կրակ ու որոտ,  
Մալու է խիստ ու թեժ,  
Ու մի տիտըր առավոտ —  
Սպանում են քեզ...

Թաղում եմ քեզ պուրակում,  
Ընկեր սիրելի,  
Ու կրակում, կրակում  
Սիրոս ոխով լի...

Կրակում եմ ու դնում,  
Գրոհում անվերջ,  
Քո զինջ պատկերն է մնում —  
Իմ հուշերի մեջ...

1944 թ.

Կովելի ուղմանակատ

## ԳԱՐՈՒՆ ԵԿԱՎ

Գարուն եկավ, դարնան հետ էլ  
Հաղար ծաղիկ, անանուխ,  
Մեր լեռների հովք թեթև—  
Պագեց յարիս դեմքը թուխ:

Սիրտս լցվեց ծաղկանց ծիծղուն  
Անմարելի մի հոտով,  
Կոսրուն, ինձ քո գիտեն է մղում  
Կյանքը մի նոր կարոտով:

Մծում եմ իս նոր ծարակով  
Տված բույրդ, դարուն դեղ,  
Իշի՛ր, կյանքի լույս առավոտ—  
Ճամբիս վրա, ամեն տեղ:

## ԶՈՎ ԼԻՆԻ

Գարնան դեփյուռ լինեի դով  
Կանաշ հանդեր, կանաշ արտ,  
Փարվեի ձեզ զինջ երազով —  
Կապույտ շուշան երկնի տակ:

Փարվեի ձեզ — սնց իմ քույրը,  
Օրորեի ինձ ձեզ հետ,  
Տարածվեր ձեր անուշ բույրը  
Եեր աշխարհում լուսավիշո:

Որ ձեր հոտով երգս հարթեր,  
Իմ հայրենի հող ու հաց,  
Ու ճախրեր նա միշտ դեպի վեր, —  
Գարուն, կյանքի լուսաբաց:

## ՄՐԳԱՆԱՍ

Աշունը բարակ անձրև է մազում  
Իմ այգում, այգում, այգում վարսաթափ,  
Յողերի միջից ժպտում, ծիծազում  
Աշքով են տնում ողկույզները սաթ:

Ծառերի վրա լցվել են հյութով,  
Տանձը, խնձորը, ունալը դեղին,  
Աղջկա նման հմայիչ, դյութող  
Իր մոտ է կանչում կարմիր նոնենին:

Երկնքի գուլալ անձրևաջրով  
Իրենց դեմքերն են լվանում անվերջ,  
Որ վաղը՝ լցված անուշ նեկտարով—  
Մեր տները գան դամբյուղների մեջ:

## ԳԱՐՆԱՆ ԶՆԳՈՑՈՎ

Մաղկավոր մարդում երգում է առում  
Եղեգից շինած շվին շրթերին,  
Յողերն առավան ուլունք են շարում  
Իմ հայրենիքի ծաղկաթերթերին:

Դարնան արելը սերմնացանի պես  
Գողմոցը լցրած ոսկի շողերով,  
Տրում է շուայլ իր բերքը հրկեղ  
Իմ հայրենիքի հուռթի հողերով:

Զմրուխտ, թավշալատ սարալանջերում,  
Գորդի պես նախշուն մարդերի վրա,  
Զինջ ծաղիկներ են երգելով փնջում  
Իմ հայրենիքի աղջիկներն ուրախ:

Շուրջս դարուն է, սիրտս խինդի ծով —  
Դանձերով լիքը անհուն, անհատակ,  
Լցրել է կյանքը դարնան զնդոցով  
Իմ հայրենիքի սամեն հարկի տակ:

☆☆☆

Ասես վառվում է արևի բոցում  
Հայրենի կանգուն լեռնաշխարհը պերճ.  
Վարում ջանգուն իր ափերն է ծեծում  
Խնդության արցունք՝ ծով աշքերի մեջ:

Սիրտս ձեր անուշ երդն է բարբառում  
Հայրենի լեռներ՝ երկինք խոյացած,  
Մեր արծիվներն են ձեր գլխին թառում  
Եվ արև գահից հպարտ նայում ցած:

Հոկում են նրանք մեր երկինքը մով  
Կտրիձների պես քաջ Դավիթ Բեկի,  
Որ ներս շխուժեն ամպի երամով—  
Մե անգղները մեր հողը դեպի:

ՄԻԱԳԵԶԱՌԻ

Զուգեցիր թավիշ կանաչներով  
Անապատները ջրի ծարավ  
Եվ ողովեցիր սրտերը մեր  
Հոկտեմբերի վաս ճաճանչներով:  
... Արդ հոգվոր եմ ես, հոգի լեզուն  
Էռկ հոգի մարդը կը հասկանա,  
Քո անմար հուրն է հոգիս կիզում  
Իմ հայրենի հող մշտականաշ:  
Ես քո հոգվորն եմ, սիլոս լեցուն  
Մեր արդասարեր հոգի բույրով,  
Էկել հավերժիդ դուռն եմ ծհծում—  
Թրջած այտերն իմ քո համբույրով:  
... Ու ելած հիմա

#### Աշխատանքի

Մի զարմանալի համառությամբ,  
Մեր կուռ շարքերը հզորագոր  
Քոի ընթացքն են փոխում ուժով,  
Նրա ընթացքը հին ու տձե,  
Փոխում ու տալիս նոր հուն ու ձե:  
Իմ դեմ բացվում է հաղարափունջ  
Օրը արևի թագը գլխին,  
Լցված ինդությամբ,

#### Բայց լուռ ու մունջ

Նայում եմ անշուք անապատին  
Ու մի պահ դեմս ոսկեսրբում,  
Գալիքն է հառնում շեն ու պայծառ  
Մեր դրախտային—

#### Լույս օրերում

Ասես մայիսյան ծաղկած մի ծառ:  
Այստեղ դեռ հիմա ավագ է շեկ,

Ու մարդու ուժից բաղմավաստակ  
Փլշում է հողը

Ու շերտ առ շերտ

Լցվում վիճերը խոր, անհատակ:  
Հիմա ավազ է, այստեղ շուտով  
Գարուն կլինի չնաշխարհիկ,  
Կյանքը կը գառնա հազարաթով,  
Ծաղիկ կը ուսնի անդամ քարին:  
Գարնան այդ խինդն է թևավորում  
Մեր գոռ դնդերին,

Որոնք ելած—

Գորշ անապատի սիրան են փորում  
Շունչ ու հեր տալիս հողին մեռած...  
Որ թեքեն Քուոր ու ամրարեն  
Մի հսկայական ամրարտակում,  
Որ տրակտորներով հսդր վարեն  
Եվ ձառեր տնկեն ամեն բակում:  
Որ մեր օրերի ջանքով անդուլ,  
Եվ ստեղծագործ ու կուռ ձեռքով  
Այս դորշ, ամայի անտապտում  
Արտերը լցվեն ոսկի բերքով:  
Որ նոճիները դալարագեղ  
Օրորվեն հովի սուց թեքերին,  
Որ ծիծառները բներ հյուսեն  
Մեր մարմարակերտ կտուրներին,  
Որ կռունկները երամներով  
Գան այս վայրերը ու շրջնան  
Որ տարին, տարին, տարին բոլոր  
Ռնց աղիկ հյուրեր մեզ մոտ մնան:  
Որ ծով արտերը ծփան նազով,  
Հաց տան թրիլիսիին, երեանին,

Եվ լցնեն անուշ մի երազով  
Մեծ թաքվի սիրտը արևային:  
Ու բանակի հետ այդ կառուցող,  
Խառնած հրճվանքս խինդին նրանց,  
Մեր ճակատներին քրտինքի ցող  
Զինվորների պես քաջ անձնուրաց,  
Անապատում այս գորշ ու աղի  
Մուրճեր, քլումգներ, բահեր առած,  
Հնչյունների տակ զիլ ծիծաղի,  
Մեր կյանքն արևի հրով վառած—  
Փորում ենք հողը,  
Պատեր շարում,

Շենքեր կառուցում լույս, բազմահարկ,  
Ներքեռում Քուն է խենթ դալարվում  
Չոծված արևի շողերով բարկ:  
Այստեղ քաղաքներ կելնեն քարից,  
Շքեղ պալատներ ու դղյակներ,  
Առանց մաքառման ու պայքարի  
Չի ծաղկի կյանքը աշխարհում մեր:  
Այստեղ դեռ հիմա ավաղ է շեկ  
Ու մարդու ուժից բազմավաստակ  
Փլում է հողը

Ու շերտ առ շերտ  
Լցվում վիճերը խոր, անհատակ:  
Գալիքի խինդն է թևավորում  
Մեր գոռ դնդերին, որոնք ելած  
Գորշ անապատի սիրտն են փորում,  
Շունչ ու հեր տալիս հողին մեռած,  
Որ ծով լույսերի հորձանքներով  
Ռդողվեն քաղաք, ուսուղ ու ավան:

Հողը զարդարվի խաս զուքսերով,  
Գառնա բարերեր ու արգավանդ:  
Որ մեր օրերի մարդը անդուկ  
Իր ստեղծագործ ու կուռ ձեռքով  
Այս գորշ, ամայի անապատում  
Ծաղիկներ ցանի հաղարաթով:

## ՊՈԵՏԻ ՄԱՀԸ

Մահը մերն է, մենք մահինք,  
Մարդու զործն է, միշտ անմահ...  
Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Դևան անտառն է, շնկում է հովք,  
Քարնան քամին է իր շվին փշում,  
Ես համբուրում եմ սիրով այն հողը  
Որտեղ բանաստեղծ Հուրյանն է հանգչում:  
Այստեղ կոխվ էր, մարտ էր արյունոտ,  
Նա այստեղ ընկավ ծխի մշուշում,  
Ահա դժխիկոր կանգնած նրա մոտ —  
Անցած, պնացած օրերն եմ հիշում:  
Կանգնում նմ մոտը ու հիշում մեկ-մեկ,  
Նրա երգերը, ժայռը նրա,  
Մերթ կայտառ, ուրախ, մեկել հոգնաբեկ,  
Սաթ գանգուրները ճակատի վրա:  
Բաքուն եմ հիշում, տունը, դպրոցը,  
Ու զողանջները մեր զվարթ զանդի,  
Արձագանքում է գարնան փողոցը —  
Պատանեկական երգերով անդին:  
Պոետի սիրած ծովն եմ ես հիշում,  
Առագաստները ճերմակ ամպերի,  
Դաղկանոցները, բռվվարը խշուն,  
Մթին անտառը սև վիշկաների:  
Ամեն առավոտ գրկած իր մանկան,  
Նա ման էր գալիս ժայռը դեմքին,

Ըմպելով ծովի զեփյուռը շնկան  
— Խրոխտ տակտի տակ նոր դրած երգի:  
Ու տուն էր դասնում նա զվարթացած,  
Մանկան գրկի մեջ խաղալիքներ,  
Խսկ իր ձեռքի մեջ ծաղիկներ բացված —  
Քաղած նորատոմիկ այգիներից մեր:  
Նա էլ մեղ նման ծաղիկ էր սիրում,  
Մայիս ու գարուն ու հող հայրենի,  
Ծով, գետ ու անտառ ու երկինք փիրուզ,  
Երգ, ծիծաղ ու պար, խնջույք ու գինի:  
Բայց փոխվեց կյանքը, կոփվ եղավ մեծ,  
Մեր հողը մտավ նեռ գերմանացին,  
Ելան գնդերը մեր կուռ, երկնաշեծ,  
Թշնամու դիմաց պատճեշ կանգնեցին:  
Մեր գնդերի հետ վրեժով լցված,  
Պոհոն էլ մտավ բոցը մարտերի,  
Հանած կորովն իր, ուժն իր ահապնած,  
Թողած աշխարհը հույղի, վարդերի:  
Գանգուր մազերը ճակատին ցրած,  
Վրեժի հուրը հրդեհած սրտում,  
Նա քանի անդամ գրոհի գնաց —  
Սելաստոպոլյան սվինամարտում:  
Ու մի օր մարտում նա ընկավ հանկարծ,  
Ծնկավ, սվինը խրած սրտի մեջ,  
Աշքերում նրա հանդավ երկու կայծ, —  
Կտրվեց հույղի մի վճիտ ջրվեժ:  
Մենք խոր կոկիծով հանձնեցինք նրան  
Արյունով օծված հայրենի հողին,  
Ու նրա պայծառ շիրիմի վրա  
Փռեցինք գարնան թափիշ անկողին:  
Մոտիկ ձորակից ծաղիկ քաղեցինք,  
Շաղկով պատեցինք շիրիմը նրա,  
Ժայռերից մարմար քարեր պոկեցինք,

վրեմի երգով շարեցինք վրան։  
Դեմու անտառն է, պարում է հովը,  
Գարնան քամին է իր շվին փշում,  
Ես հեռանում եմ թողած Սև ծովը,  
Որի ափի մոտ պոկտն է հանդշում։  
Հեռանում եմ ես թախիծն աշքերիս,  
Հեռանում եմ ես աշնան պես տրտում։  
Դու հայրենական աղբյուր երգերի—  
Անմեռ կմնաս հավետ մեր սրտում։

1942 թ. Սեվաստոպոլ

## Լ Ի Ր Ի Կ Ա

Քեզ թողեցի ևս կանգնած աշնան մշտաշում,  
Քամին դեղին աերեն էր անտառից քշում...

Վերջին անգամ մի կկու կանչեց ու թոավ,  
Իշտի աշնան երեկոն մեր գյուղի վրա...

Ու գնում եմ, քեզ թողած մեր կալերի մոտ,  
Չեմ մոռանա համբուլը մանուշակահոտ...

Հիշում եմ քեզ մեր այդում, կանաչ, ծաղկավետ,  
Թրվում ես ու խաղում բալիկներիս հետ...

Իսկ ես ծառերն եմ ջրում թրջած ձեռ ու ոտք,  
Վարդենին է մեր բուրում այդու դուն մոտ...

Մայրս թութ է հավաքում փեշի մեջ իրա,  
Թոշուններն են նվազում ծառերի վրա...

Ել չեմ հիշում ես ոչինչ, պառկած եմ դիրքում,  
Դեմս դաշտ է ու վոշի, արկերն են երգում...

1944 թ. ԿԾՈՒՅԵԼԻ սաղմանակատ

# ԳԱԶԵԼ

Սիրով՝ Ա. Ի. ԽՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Սիրտդ մի օր զատարկ մնաց մուրացկանի ափի նման,  
Աշնան հածող, աշնան թախծող, աշնան լացող ամպի նման:

Կյանքի ճամբով քարվաններն են անհանգրվան եկեղեց  
անցել,

Հայրենիքիդ վշտերն են խոր քո սրտի մեջ վերքեր բացել...

Արագածի նման հպարտ թիկն տված երգիդ գահին  
Դու հպարտ ես միշտ էլ նայել քո երգերով՝ ահին, մահին:

Ամ սիրեցիր՝ քեզ շտվին, անգութ ու քար հին աշխարհում,  
Ճարան սիրած քո Զարուին, սիրտդ լցըրին կուց-կուց արյուն:

Տեսար զմբուխտ քո Մանթաշը, Արագածը մովերի մեջ,  
Աղի-աղի քո մոր լացը՝ վշտերի խոր ծովերի մեջ:

Ու հեռացար ուզտերիդ հետ անապատը մութ գիշերով,  
Սիրտդ լիքը սև հուշերով, սիրտդ խոցված սուր փշերով:

Տարիները շարվե-շարան, տարիները թռա՛ն-գացի՛ն,  
Ու մի օր էլ ամպրոպ պայթից, արև ծագեց Արագածին:

Ու արեի ճամբեն բռնաժ քարվանիդ հետ զնդղնդալով  
Քո հայրենի տունը ղարձար խնդությունից արցունք լալով:

## ՆԱՄԱԿ ԿՆՈՉՍ

Ահա նստած բլինդաժում, նամակ եմ քեզ գրում,  
Պատրաստվում ենք կրկին, թելա, գրոհի ենք դնաւմ:  
Նամակի հետ տուն եմ թոշում, մտքով տուն եմ թոշում,  
Ծով ծիծաղով սիրտս լցված երգում եմ ու կանչում:  
Մի բան պատմեմ, ականջ արա, ահա պատմում եմ եռ,  
Բայց սրտով քաջ մնա, թելա, երբ զրուցն այս լսես:  
Սովորական դեպք է սա մի, պառկած դիրքերում մեր,  
Դեպի մեզ է գալիս ահա՝ ոսոխը շար ու նեռ:  
Հավաքել են գյուղի կանանց, դեպի մեզ են բերում,  
Գանգստերյան ունակները հարբած ու երերուն:  
Դեպի մեզ են գալիս կանայք՝ մահվան թափորի պիս,  
Ու նրանց հետ, նրանց շարքում կարծես տեսնում եմ քեզ:  
Հավաքել են գյուղի կանանց, գրոհի են գալիս,  
Ով որ հետ է մնում, թելա, ա՞ի, կրակ են տալիս:  
Ահա նրանք մոտենում են, մի քանի քայլ մնաց,  
Կարծես սիրտս պիտի պոկի աղիողորմ մի լաց:  
— Թելա՛, — կանչում եմ ես, — թելա՛, կանգնի՛ր, ո՞ւ ես  
դալիս,  
Միթե՛, չես վախենում, թելա, տե՛ս, կրակ եմ տալիս:  
Բայց գլխիկոր գալիս ես զու գեպի մահվան գիրկը,  
Կարծես ահա պիտի պայթի գլխիս գորշ երկինքը:  
Երբ մոտեցան մեր դիրքերին, մեր քաջ կոմիսարը  
Խրոխտ ձախով այնպես զուաց, դողաց դեմի սարը:  
— Զվախենաք, իսկուն պառկեր ու պառկեցին կանայք,  
Ու թափեցինք թշնամու դեմ՝ հուր, երկաթ ու անապ:

Հետո ելանք մենք գրո՞ի, սվինահար արինք,  
Ուր-սր, թելա, նայում էիր՝ դիակ էր ու արին:  
Հաղթանակից հետո թելա, եկա որ գտնեմ քեզ,  
Հանկարծ դեմս կանգնեց շքնաղ ունբախնու՞ի մի հեզ:  
Վարսեր ուներ նա ոլորոմ, աշքեր՝ երկու խնձոր,  
Բայց ընկճված, լացն աշքերին, սիրտը վշտի մի ծով:  
Ինձ թվաց թե դու ես, թելա, այնքան նման էր քեզ,  
Գուրգուրեցի այդ կնոջը սրտի կարոտով կեզ:  
Պատմեց նա ինձ իրենց կրած տանջանքների մասին,  
Թե ուզում ես լսել նրան, եղիր արիասիրու:  
Պատմեց, — պիսատեցին հորս, տունս հրդեհեցին,  
Ու սրի տակ առան, նրանք գյուղի փոքրին, մեծին:  
Իմ աշքերի առաջ, եղբայր, իմ մինուճար բալին,  
Քրբաջառվ երեք գագան սվինահար արին:  
Ու լսեց նա, լացը նրա սիրտս պոկեց, տարավ,  
Ու կանգնել իմ թշնամու դեմ ես վրեժի ծարավ:  
— վրե՛ժ, վրե՛ժ, — կանչում եմ ես ու դրոհում առաջ,  
Մեր կուռ վաշտերի հետ, թելա, հրե թեկեր առած:  
Ել ի՞նչ զրեմ: Մնաս բարով: Գրո՞ի ենք ելնում,  
Լայնատարած դաշտի վրա մեր արկերն են ոռնում:  
Արշավում են տանկերը մեր, հուր ու վառոդ հազում,  
Մնացածը հետո, թելա, մենք առաջ ենք վազում,

1944 թ. մայիս  
Կովեկի ուղմանակատ

## Ս Ի Ն Ա Մ

Իմ հայրենիքի զմբուխտ լեռներում  
Աւ հովհաններում խաս ու ծաղկավոր,  
Գարնան վարդավառ ժպիտն աշքերում  
Մի արտօստ թողի նախշուն փետրավոր:

Սինամ իմ գրել անունը նրա,  
Նա մի աղջիկ է կակաչի հոտով,  
Երկու խալ ունի այտերի վրա,  
Աշքերով կայրի, թե անցնեք մոտով:

Ոշոք իմ սրտից նրան չի հանի,  
Նա իմ հոգու մեջ, իմ հուզաշխարհում  
Ա՛յս, ծվաբ մտած որպես աղավնի —  
Կյանքս դարձրել է ծաղկավառ գարուն:

Սպասում է նա իմ վերադարձին,  
Զեռքը ճակատին հովանի արած,  
Հայրենի դյուդ է ոլանում իմ ձին՝   
Հրդիչների մեջ հուր թեր առած:

## Ա Շ Ո Ւ Ն

Աշուն է, աշուն,  
Աշուն է մրգի,  
Աշունը նախշուն  
Մի սինի ձեռքին, —

Սարերի վրա,  
Այգիների մեջ,  
Բուրմունքն է իրա  
Տարածել անվերջ...

Յազիկ փնչերով  
Աղջիկները մեր,  
Իրար կանչելով,  
Առած կողովներ —

Խաղող են քաղում,  
Տանձ, նուռ ու խնձոր, —  
Ոսկի է մաղում  
Օբը մեղրածոր:

## ԼԻՆԵՒՐ ԱՐՏՈՒՏ

Լինեիր արտուտ  
Խաս պուտպուտովիկ,  
Ռսկեոր արտում —  
Իմ անուշ՝ քուրիկ...

Չայնդ կարկաշեր  
Առվի եղերքին,  
Սիրտս ականջեր  
Քո անուշ՝ երգին...

Հովին ինձ օրորեր  
Արտերի գրկում,  
Ու երգս բուրեր  
Իմ հայրենիքում:

## Մ Ո Ր Ը Ս

Հույզերով հորդ ու վարարուն,  
Երգով մի անձկալի  
Ամին տարի, ամին գարուն,  
Երբ մեր պյուղն եմ դալի,

Առնում ես քո ջերմ դրկի մեջ,  
Սիրով ինձ դուրգուրում,  
Քեզնից գարնան անուշավետ  
Շաղկի հոտ է բուրում...

Բուրում ես ոնց յասամանին,  
Երդիս կանաչ բախչում,  
Իմ սիրելի, անուշ մայրիկ,  
Նորից քեզ եմ թռչում:

Ինձ կանչում է տուած կաթոդ,  
Գլուխնքներդ բարի,  
Իմ հուշերի հոտով վարդը  
Բու մնացիր, մայրիկ:

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

Սիրտս ողողված ծիրանի բոցով  
Թեեր է առել, թոշում է, կանչում—  
Կրեմլի աստղերը իմ ճակտին վառած,  
Ծիծաղլը շրթին անուշ զնդոցով  
Հուզերիս զվարթ աղբյուրն է հնչում  
Աշխարհը երգիս թեերին առած:

Այսօր ինձ համար տոն է բերկրալի,  
Հազար շեփոր է հնչում իմ հոգում,  
Այս արևավոր տոնին ծաղկավառ  
Զարկելով խոսուն քնարիս լարին  
Սիրտս մի ուրախ երգ է նվագում  
Եվ խինդ ավետում աշխարհին արար:

Ահա քայլում են խրոխտ, ժպտադեմ  
Անհաղթ գնդերը լենինյան դորքի—  
Ահեղ մարտերում հաղթանակ տարած.  
Վայ, նրան ով որ հայրենիքիս դեմ  
Նորից խելագար կոհվ բորբոքի,  
Մտնի մեր հողը—արյունի ծարավ:

Ես քո ծնունդն եմ սիրով բարբառում,  
Լենինյան բանակ մեր հաղթանակի.  
Գովում եմ ուժդ մայր հողից առած,  
Տարածում փառքդ արար աշխարհում,  
Քայլում ես, ճամրիդ խութերը վառած,  
Քո մեջ անթեղած հուրն արեգակի:

Վրեժով լցված ու զենքը ձեռին  
Իմ երկրի մարդը կյանքի թանկ դնով  
Ազատությունն այս ձեռք բերեց մարտում,  
Մոխիր դարձրեց մարդակուլ նեռին,  
Արդ, Ստալինի արև անունով  
Հիմա իր շինչող գալիքն է կերտում:

Այս խնդությունը լինինը բերեց,  
Մեծ Ստալինը, ժողովուրդը ուստ,  
Եվ ուժից մեր գոռ ու տքնավաստակ  
Իմ երկրի վրա գարունը բուրեց,  
Երկիրը կապեց հազարերանդ լույս,  
Երկիրը դարձակ ծաղկուն բուրաստան:

Եվ կուռ շարքերով, մեր հոգու մեջ բոց  
Դեպի արևն ենք ծիծաղով քայլում  
Բյուր դրոշներով կարմիր ու ծածան.  
Այդպես մաքրաջինջ ու արևազոծ  
Իմ հայրենիքի երկինքն է փայլում —  
Անձրևից հետո կազմում ծիածան:

ԲՈՎԵՆԴԱՀԱՅԹՅԱՆ

Հանկարծ դային	41
Աղբյուրի մուտ	42
Բաց արա դուռը	44
Կարկաչ	45
Պապս	46
Տիրություն	47
Այս դարսնը	48
Օրորոցի երգը	49
Գարնանամուտ	51
Երկու նամակ	52
Պատասխան	53
Իմ երդը	54
Սերըդ	55
Մի աղջկա	56
Ռւենի	57
Երեկո	58
Էս մի կանաչ ծառ լինեմ	59
Աշնանամուտ	60
Կաթը	61
Աղբյուր	62
Արեք	63
Պուրակում	64
Գարսն եկավ	67
Զով լինի	68
Մրգահաս	69
Գարնան զնդոցով	70
***	71
Մինզեշտոր	72
Պուետի մահը	77
Լիրիկա	80
Գաղել	81
Նայմակ կնոջս	82
Սինամ	84

Աշում	85
Իինեիր արտութ	8.
Մորդս	87
Հոկտեմբերյան	88



Редактору—М. Դավթյան

---

Чапа имзаланмыш 18/XI-46. Чап листи 27/в. Нэшрият листи 3  
Бир чап листиндэки һэрфлэрийн сайы 40.000. Сифариш 1406.  
ФГ 09051. Тираж 3.000.

---

III Интернасионал" мэтбээси, Бакы, Саратоветс-Ефим күч. 29

Азэрбайчан ССР НС янында Полиграфия вэ Нэшрият  
ишлэри идарэсн


ԳԱԱ Հիմնարար գիլ. Օրադ.



FL0041670

29154

5 ман.



АТАНЕС СЕНАЛ

КӨЙ ГУРШАГЫ

(эрмэни дилингэ)

Баки — АЗЭРНЭШР — 1947